



*Կալիֆորնիայի հաշմանդամների պահպանության և իրավունքների
պաշտպանության համակարգ
Անվճար հեռախոսահամար՝ (800) 776-5746*

Բժշկական օգնության ստացում ժամանակին

Մայիս 2016թ., Հր. #5556.10

Կալիֆորնիայի օրենքն ասում է, որ կառավարվող բուժսպասարկման ծրագրերը Ձեզ համար պետք է ապահովեն բժշկական ծառայությունների ժամանակին ստացումը:¹ Ստորև ներկայացված են բուժսպասարկում ստանալու ժամկետները.

Այցերի տեսակներ և ժամկետներ

- Ոչ շտապ այց Ձեր բժիշկ-թերապևտին Ձեր դիմումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:*
- Ոչ շտապ այց որևէ մասնագետի Ձեր դիմումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:*
- Ոչ շտապ այցեր օժանդակ ծառայությունների համար (ռենտգեն հետազոտություններ և այլն), վնասվածքը կամ այլ առողջական

¹ Կալիֆորնիայի Առողջապահության և անվտանգության մասին օրենք, բաժին 1367.03: Կալիֆորնիայի վարչական օրենսգիրք, հատոր 28, բաժին 1300.67.2.2: Կանոնակարգը ներառում է նաև ակնաբուժական, ատամնաբուժական և այլ տիպի բուժսպասարկման համար սպասելաժամանակները: Տե՛ս նաև <http://wps0.dmhc.ca.gov/regulations/docs/13CCRP.pdf>:

Էջ 2՝ 3-ից

խնդիրն աշխատորոշելու կամ բուժելու համար, Ձեր դիմումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:*

- Ոչ շտապ այց ոչ-բժշկական հոգեկան առողջության հաստատություն Ձեր դիմումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:*
- Շտապ այց, որը չունի նախնական հաստատման կարիք, Ձեր դիմումից հետո 40 ժամվա ընթացքում:
- Շտապ այց, որն ունի նախնական հաստատման կարիք, Ձեր դիմումից հետո 96 ժամվա ընթացքում:

Հեռախոսային սպասելաժամանակ

Հեռախոսային սպասարկում օրական 24 ժամ, շաբաթական 7 օր որևէ բուժաշխատողի հետ խոսելու համար՝ հասկանալու, թե որքան շտապ է Ձեզ անհրաժեշտ բժշկական օգնությունը: Սպասելաժամանակը չի կարող լինել 30 րոպեից երկար:

Ձանգ հաճախորդների սպասարկման կենտրոն սովորական աշխատանքային ժամերին: Սպասելաժամանակը չի կարող լինել 10 րոպեից երկար:

Բացառություններ

* Պրոֆիլակտիկ բուժում և պարբերական բժշկական հսկողություն:

* Այցերի սպասելաժամանակը կարող է երկարացվել, եթե Ձեզ սպասարկող բուժհաստատությունը որոշի, որ ավելի երկար սպասելաժամանակը վնասակար չի լինի Ձեր առողջության համար:

Ձեր բժիշկ-թերապևտը կարող է առաջարկել Ձեզ այցելել բժիշկ-թերապևտին, ավագ բուժքրոջը կամ բժշկի ասիստենտին այցի համար Ձեր տված դիմումի նույն կամ հաջորդ օրը: Սա կոչվում է "բուժսպասարկման ընդլայնված մատուցում": Եթե Ձեզ պետք չլինի այդ այցը, այն կարող է նշանակվել ավելի ուշ ամսաթվի:

Էջ 3` 3-ից

Ի՞նչ է պատահում, եթե իմ տարածքում չկան բավարար քանակով բուժհաստատություններ:

Օրենքն ասում է, որ եթե Ձեր տարածքում չեք կարող այցելել բժշկին ժամանակին, քանի որ չկան բավարար քանակով բուժհաստատություններ, ապա Ձեր բժշկական ապահովագրության ծրագիրը պետք է օգնի Ձեզ նշանակել այցը ճիշտ բուժհաստատությունում:

Ի՞նչ կարող եք անել, եթե ժամանակին չեք կարողանում օգտվել բժշկական ծառայություններից.

1. Բողոքեք Ձեր բժշկական ապահովագրության ընկերությանը:
2. Բողոքը ներկայացրեք՝ զանգահարելով Կառավարվող բուժսպասարկման վարչության թեժ գծին (888) 466-2219 անվճար հեռախոսահամարով, TDD՝ (877) 688-9891 կամ <http://www.dmhc.ca.gov/fileacomplaint.aspx#.Vv1k6tIrKUk>
3. Կապվեք Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքներով զբաղվող կազմակերպության հետ (800) 776-5746 անվճար հեռախոսահամարով, TTY (800) 719-5798 կամ <http://www.disabilityrightsca.org>

[Մենք ցանկանում եք լսել Ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում:](https://docs.google.com/forms/d/1d6ezTl2M5UMAWU66exLbc1SQ9wDPzvtuS3AGR4-cgwE/viewform?c=0&w=1)
<https://docs.google.com/forms/d/1d6ezTl2M5UMAWU66exLbc1SQ9wDPzvtuS3AGR4-cgwE/viewform?c=0&w=1>

Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքներով զբաղվող կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս
<http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>: